

Կ Ա Ր Ծ Ի Ք

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՒԱԽՈՍԽ

Արտակ Արտուշի Մարտիրոսյանի Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Գյուղատնտեսության ապահովագրության ներդրման արդյունավետության գնահատման մոտեցումները Հայաստանի Հանրապետությունում»  
թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Ողջ աշխարհում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսությունը բնորոշվում է որպես տնտեսության ամենառիսկային բնագավառներից: Լավագույն համաշխարհային փորձը վկայում է, որ գյուղատնտեսության բնագավառի ռիսկերի կառավարման մեթոդների շարքում ամենաարդյունավետն ազրոապահովագրությունն է: Այն հնարավորություն է ընձեռնում գյուղացիական տնտեսություններին վերականգնելու տարերային աղետների, բնության արհավիրքների և այլ անկանխատեսելի պատահարների հետևանքով առաջացած կորուստները կամ վնասները: Սակայն, այս բնագավառի ռիսկերի կառավարման գործում մասնավոր կապիտալով ապահովագրական ընկերությունները, որպես կանոն, շահագրգովածություն չեն ցուցաբերում: Վերջիններս, ինքնուրույն ստանձնում են սահմանափակ ռիսկեր կամ առաջարկում են մեկ ռիսկից ապահովագրության պրոդուկտներ: Ինչ վերաբերվում է մուլտիռիսկային ծառայություններին՝ ապա դրանք հիմնականում իրականացվում են պետության մասնակցությամբ: Պետական աջակցությունն իրականացվում է ապահովագրավճարի կամ ապահովագրական հատուցումների սուբսիդավորման տեսքով, պետական մասնակցությամբ ապահովագրական ընկերության միջոցով ռիսկերն ապահովագրելու եղանակով կամ պետական վերապահովագրական ընկերությունների կողմից մասնավոր ապահովագրողներից ազրոապահովագրության ռիսկեր ստանձնելու ձանապարհով:

Այս առումով, գյուղատնտեսության ապահովագրության կազմակերպման, լայնամասշտաբ ներդրման և ֆինանսավորման հիմնախնդիրները միշտ էլ գտնվել են ինչպես ոլորտի մասնագետների, տեսաբանների, այնպես էլ գործարարների ու շաղրաբության

կենտրոնում, քանի որ զյուղատնտեսության զարգացումը, կենսական նշանակություն ունենալով հանդերձ, կրում է օբյեկտիվ ռիսկեր, ինչն էլ հաճախ խոչընդոտում է ապահովագրության գործարքների ընդլայնմանը:

Ունենալով շահառուների այսպիսի լայն շրջանակ՝ այսուհանդերձ զյուղատնտեսության ապահովագրության զարգացումը ՀՀ-ում դանդաղում է, որի պատճառներից մեկը ապահովագրական ինստիտուտի ներդրման արդյունավետության գնահատման հայեցակարգային մոտեցումների բացակայությունն է: Մասնավորապես, դեռևս իրենց լուծումներին են սպասում ապահովագրության ներդրման արդյունավետ քաղաքականության հայեցակարգի մշակումը, զյուղատնտեսության ապահովագրության արդյունավետության չափելիության համակարգի ստեղծումը, ապահովագրական ռիսկերի գուման շահադրդիչ համակարգի ձևավորումը, շահառուների շրջանում թափանցիկ տեղեկատվության և հաշվետվողականության համակարգի կիրառումը և այլն:

Բացի այդ, ազրոապահովագրությանն առնչվող տարբեր շահառուներ դեռևս չեն կարողանում հասկանալ, թե ինչ տնտեսական հետազիծ է թողնում ապահովագրական գործընթացը, և թե ինչ չափով է այն անդրադառնում իրենց գործունեության վրա, քանի որ երկրում չի կիրառվում զյուղատնտեսության ապահովագրության ներդրման արդյունավետության գնահատման համակարգային մոտեցում: Ընդամենը ապահովագրության պայմանագրային կողմեր հանդիսացող ապահովադիրն ու ապահովագրողն են գնահատում գործարքի արդյունավետությունը, որից դուրս են մնում գործընթացին առնչվող մյուս շահառուների գնահատումները:

Այս առումով կարևորում է զյուղատնտեսության ապահովագրության գործընթացի հաշվետվողականության համակարգի ֆինանսանակ ցուցանիշների թափանցիկության ներդրումը և հետադարձ կապի ապահովումը, որն էլ իր հերթին պահանջում է ապահովագրական արդյունքների հստակ հաշվառում և ստացված տեղեկատվության հասցեագրում բոլոր շահառուներին: Հատկապես արդիական է համարվում ապահովագրության հաշվետվողականության բարելավումը, որը հնարավորություն է տալիս շահառուներին արդյունավետ որոշումների կայացման և դրանց հետևողական իրագործման համար:

## Ատենախոսության նպատակն ու խնդիրները

Հետազոտության նպատակն է մշակել և ներկայացնել ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության ներդրման արդյունավետության որակական և ֆինանսական գնահատման բարելավված մեթոդաբանություն, որը հնարավորինս հաշվի կառնի ապահովագրական գործընթացին առնչվող շահառուների նպատակադրումները և դրանց հասանելիության մեկնարանությունները վերլուծության տեսանկյունից:

Ենեկով հետազոտության նպատակից, ատենախոսությունում առաջադրվել են հետևյալ խնդիրները,

- մշակել գյուղատնտեսության ապահովագրության ներդրման արդյունավետության գնահատման հայեցակարգ, որը հնարավորություն կրնակողմանի վերլուծելու ապահովագրական գործընթացի տարբեր շահառուների սպասումների բավարարման աստիճանը և օժանդակելու ապահովագրական գործընթացի ակտիվացման մոտիվացիոն լծակների կիրառմանը,
- առաջարկել գյուղատնտեսական ապահովագրության ներդրման արդյունավետության գնահատման ցուցանիշներ, որի արդյունքում կձևավորվի արդյունավետության համեմատական վերլուծության հնարավորություն,
- առաջարկել ներդրման արդյունավետությունը գնահատող համակարգ, համախմբելով գյուղատնտեսության ապահովագրության բոլոր շահառուների ոլորտային սպասումները, արձանագրելով ապահովագրական գործընթացի փաստացի վերջնարդյունքները, բացահայտելով շահառուների սպասումներից ապահովագրության փաստացի վերջնարդյունքների շեղումները,
- գյուղատնտեսական ապահովագրության ներդրման արդյունավետության գնահատման համար կիրառել միասնական չափելիություն, որը հնարավորություն կրնակողման իրականացնելու համեմատական վերլուծություն,
- ներկայացնել գյուղատնտեսության ապահովագրության հաշվետվողականության մեխանիզմ, հետադարձ կապ ապահովելով ապահովագրական գործընթացի շահառուների միջև, և դրանով իսկ նպաստելով ապահովագրության ներդրման արդյունավետության բարձրացմանը միտված որոշումների կայացմանը:

**Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունը**

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություն բաժնից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Ներածությունում հիմնավորվել է քեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները, ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, տեսական, մեթոդական և տեղեկատվական հիմքերը, գլուխական նորույթը արդյունքների գիտագործնական և կիրառական նշանակությունը:

**Ատենախոսության առաջին՝ «Գյուղատնտեսության ապահովագրության ֆինանսավորման և զարգացման միտումները ՀՀ-ում»** գլխում վերլուծվում են ապահովագրական զարգացման գործընթացը, խոչընդոտներն ու դրանց վերացման միջազգային փորձը:

Գյուղատնտեսության ապահովագրության կազմակերպման միջազգային փորձի ուսումնասիրությունը, ցույց է տալիս, որ դեռևս իր կիրառությունը չի ձևավորվել ապահովագրական այնպիսի մոդել, որը իր առավելությունների հետ մեկտեղ, չունենա նաև որոշակի թերություններ: Այսպես, եթե ապահովագրական գործընթացի կազմակերպման և վնասների փոխհատուցման ծանրության կենտրոնը ընկնում է պետության վրա, ապա այն բավականին մեղմում է լայնածավալ գյուղատնտեսական կորուստների փոխհատուցման ֆինանսական ռիսկերը: Սակայն, մյուս կողմից, եթե ապահովագրական ռիսկերը պետությունը ամբողջությամբ վերցնում է իր վրա, ապա դա իր հերթին մեծ քեռ է դառնում պետական բյուջեի վրա՝ միաժամանակ ապահովագրական դաշտը դարձնելով ոչ մրցակցային: Ավելին, պասիվացնում է ֆերմերների գործունեությունը՝ հնարավոր վնասների կանխարգելիչ միջոցառումների իրականացման առումով, քանի որ գյուղատնտեսներն իրենց առավել ապահով են զգում պետական աջակցման պարագայում:

**Ատենախոսության երկրորդ՝ «Գյուղատնտեսության ապահովագրության ներդրման արդյունավետության ֆինանսական գնահատման հիմնախնդիրները»** գլխում իրենց մեկնաբանություններն են ստանում ապահովագրական գործընթացի արդյունավետության գնահատման մոտեցումները տարբեր շահառուների տեսանկյունից: Իրենց փոխկապակցվածությամբ ներկայացնել գյուղատնտեսության ապահովագրության արդյունավետ քաղաքականություն ապահովող առանձին բաղադրիչները: Ապահովագրության արդյունավետ կազմակերպման մեխանիզմը ապահովագրական ծածկույթի, ապահովագրավճարների ձևավորման, վնասների փոխհատուցման, ստանձնած

պայմանագրային պարտավորությունների կատարման, ապահովագրական գործունեության կայունության և մոտիվացիայի գործիքակազմի կիրառման ու կանոնակարգման, տեղակատվության ապահովման և հաշվետվողականության սկզբունքների համախմբմած փոխկապակցումն է, ուղղված ապահովագրության նպատակադրումների լիարժեք իրագործմանը:

Ատենախոսության երրորդ՝ «Գյուղատնտեսության արդյունավետ ապահովագրության ֆինանսական գործիքակազմի կատարելագործումը» գլխում ներկայացվում են ապահովագրական գործընթացի ֆինանսական կայունության արդյունավետ կառավարման ուղիները: Առաջարկվել է ֆինանսական կայունության պաշարի գնահատման նոր մոտեցում, որի դեպքում հաշվի է առնվում ապահովագրական գործընթացի շահառուները ուղղակի կամ անուղղակի ճանապարհով մասնակցության չափաբաժնը ապահովագրական գործընթացի ֆինանսական հոսքերի ձևակորման գործընթացին: Այսինքն, նկատի են առնվում այն ֆինանսական հոսքերը, որոնք նպաստում են ապահովագրական գործընթացին առնչություն ունեցող ապահովադիրի ֆինանսական բեռը:

«Եզրակացություն» բաժնում ամփոփվել և համառոտ ներկայացվել են հետազոտության վերաբերյալ հիմնական եզրակացությունները:

Ատենախոսության ստացված արդյունքների հավաստիությունն ու դրանց գործնական նշանակությունը

Հետազոտության ուսումնասիրության օբյեկտ է հանդիսացել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ապահովագրության շրջանակը, իրեն հատուկ գործույթների ոլորտով, կազմակերպչական ու ֆինանսական կառույցներով և նորմատիվ կարգավորիչներով:

Հետազոտության առարկան գյուղատնտեսության ապահովագրության ներդրման արդյունավետության ֆինանսական գնահատման հիմնախնդիրներն են, որոնք ընդգրկում են ոչ միայն պայմանագրային կողմերի, այլև ապահովագրական գործընթացի ուղղակի և անուղղակի շահառուների շրջանակը:

Հետազոտության արդյունքները, կատարված առաջարկությունները, մշակված մոտեցումները և մեթոդները կարող են գործնական կիրառություն գտնել ՀՀ գյուղատնտեսության ապահովագրության ոլորտում վարվող քաղաքականությունում՝

նպաստելով ապահովագրավճարների հավաքագրման և վերաբաշխման գործընթացի բարելավմանը, ազրարային ոլորտի ապահովագրական ծածկույթի ընդլայնմանը, ինչպես նաև ապահովագրության շահառուների գործողությունների մոտիվացմանը:

### **Ատենախոսության գիտական արդյունքները և նորույթը**

Հետազոտության գիտական նորույթը, ՀՀ գյուղատնտեսության ապահովագրության ներդրման արդյունավետության գնահատման բարելավման ուղիների և ցուցանիշների մշակումն ու ներկայացումն է: Մասնավորապես.

- Ներկայացվել է գյուղատնտեսության ապահովագրության արդյունավետության գնահատման հայեցակարգային մոտեցում, միտված ինչպես ապահովագրական գործընթացի շահառուների նպատակադրումների և դրանց փաստացի ձևավորման ցուցանիշների համախմբմանը, այնպես էլ ապահովագրական գործընթացի կայունության ֆինանսական վերլուծության մեթոդաբանության բարելավմանը,
- Մշակվել է գյուղատնտեսության ապահովագրության ներդրման արդյունավետության գնահատման մեխանիզմ, որը հաշվի է առնում ինչպես ֆինանսական ռեսուրսներով ապահովածության գնահատումը, այնպես էլ ապահովագրական գործընթացի շահառուների նպատակադրումներն ու դրանց շեղումների փաստացի ցուցանիշները,
- Մշակվել և ներկայացվել են շահառուների տարբեր խմբերի ապահովագրական հատուցի ցուցանիշներ, որոնց հիման վրա հնարավորություն է ստեղծվում կատարելու գյուղատնտեսության ապահովագրության ներդրման արդյունավետության համապարփակ գնահատում,
- Մշակվել և ներկայացվել է գյուղապահովագրության ֆինանսական տեղեկատվական հոսքերի համակարգման և հաշվառման մոտեցում, ինչը հնարավորություն է տալիս կառավարչական հաշվետվության միջոցով վերահսկել և վերլուծել ֆինանսական հոսքերի նպատակայնությունն ու արդյունավետությունը:

## Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը զերծ չէ նաև բացքողումներից և թերություններից, որոնցից մեր կողմից կարևորվել են հետևյալները.

1. Գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրությունն ունի բարձր ռիսկայնություն և ծախսատարություն, հաճախ ոչ շահավետ է և իրականացման տեսանկյունից համարվում է ամենաբարդ ապահովագրատեսակներից: Ազրոապահովագրության ներդրման առումով սկզբունքային է, թե գյուղատնտեսության որ ճյուղից է անհրաժեշտ սկսել (մշակաբույսերի, թե անասնապահության), ինչպես է նպատակահարմար իրականացնել՝ պետական, թե մասնավոր եղանակով, ռիսկերը ապահովագրելիս պետական վերաապահովագրական ընկերության ստեղծումն է նպատակահարմար, թե օտարերկրյա վերաապահովագրության ծածկույթի ձեռքբերումը, գյուղատնտեսական ծախսերի, թե վնասների ապահովագրությունն է արդյունավետ և այլն: Թեև ատենախոսությունում վերը հիշատակված խնդիրներին անդրադարձ առկա է՝ սակայն աշխատանքն ավելի կշահեր, եթե դրանք ավելի համակարգված և ամբողջական ներկայացվեր, ինչից ոչ միայն կրաքարանար կատարված աշխատանքի գիտական որակները, այլև պարզ կդառնար ատենախոսի մոտեցումները ազրոապահովագրության վերը հիշատակված սկզբունքային հարցերի վերաբերյալ:

2. Ինչպես գիտենք ՀՀ-ում KFW բանկի աջակցությամբ 2019թ-ից ներդրվել է գյուղատնտեսության ապահովագրության ծրագիր, որը համակարգում է «Հայաստանի Ազրոապահովագրության գործակալությունը» և որին մասնակցում են ՀՀ-ում գործող 3 ապահովագրական ընկերություններ: Մյուսները, հիմնականում կանխատեսելով պրյեկտի վնասարեր լինելը, հրաժարվել են մասնակցել ծրագրին: Ատենախոսությունում բանվականին շատ լուսաբանվել և անդրադարձ է կատրավել ծրագրի ներդրմանը (ինչ ռիսկերից, որ մարգերում, ինչ գումարի սահմաններում և այլն) և քննարկվել են զարգացման հեռանկարների խոչընդոտները: Ավելին առանձին հավելվածների տեսքով ներկայացվել է հիշյալ ծրագրի ժամանակագրությունը: Սակայն պետք է փաստել, որ հիշյալ ծրագրի մեկնարկից արդեն իսկ անցել է ավելի քան 2 տարի և ցանկալի կլիներ անդրադարձ կատարել փաստացի արդյունքին, առկա ցուցանիշների վրա իրականացնել խնդիրների ուսումնասիրություն:

3. Ատենախոսն առաջարկվում է ստեղծել պետական ապահովագրական ընկերություն՝ 90% վերաապահովագրության ծածկույթի պահպանմամբ, ինչի արդյուրում

կապահովվի ապահովագվարդարի 19%-ի չափով խնայողություն: Աշխատանքն ավելի կշահեր, եթե նկարագրվեր, թե նման վերաապահովագրության ծավալի պարագայում, ինչպես է հնարավոր այդշափ խնայողություն ունենալ, եթե առկա են նաև համակարգի պահպանման, այլ հարակից վճարներ, ինչպես նաև հատուցումների հստակ վիճակագրություն:

4. Կարևորելով ապահովագրողից և ապահովադիրց զատ ապահովագրության գործընթացի մյուս մասնակիցներին՝ այնուամենայնիվ հարկ է նկատել, որ գյուղապահովագրության մյուս շահառուների (բանկեր, վերամշակող կազմակերպություններ, սննդամթերքի վաճառահանման սուբյեկտներ, պետական գերատեսչություններ) օրենսդրությամբ (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք) կարգավորված չինելը կարծես թե ատենախոսի կողմից գերազնահասված է (Եջ 84, 85), քանի որ նմանատիպ հարաբերությունները ապահովագրության բնագավառում շատ հեշտ կարգավորվում են, ինչի օրինակը ԱՊԴԱ ոլորտում Ավտոապահովագրողների Բյուրոյի կողմից լիցենզավորվող փորձագետների, ծրագրային սպասարկում իրականացնող կազմակերպությունների և այլ սուբյեկտների առկայությունն է:

5. Ատենախոսության 97-րդ էջում առաջարկվում է ստեղծել Հայաստանի գյուղատնտեսության ապահովագրողների բյուրո, սակայն հստակ չէ արդեն իսկ գործող ՀԱԱԳ-ից առանձին նոր կառույցի մասին է խոսքը, թե ոչ: Բացի այդ, ցանկալի էր քննարկել դրանք մեկ միասնական մարմնի (մասնավորապես Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի կազմում) կազմում միավորելու հնարավորությունը, ինչի արդյունքում կխնայվեին որոշակի միջոցներ և հաջողությամբ կկիրառվեր արդեն իսկ առկա դրական փորձը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արտակ Արտուշի Մարտիրոսյանի «Գյուղատնտեսության ապահովագրության ներդրման արդյունավետության գնահատման մոտեցումները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունն, իր կատարման պատշաճ գիտական մակարդակով կարելի է որակել, որպես ինքնուրույն գիտական հետազոտություն, որտեղ դրված և լուծված են ՀՀ գյուղատնտեսության ապահովագրության արդյունավետության բարձրացմանն ուղղված գործնական կարևոր խնդիրներ, վերլուծության ու

հետազոտության արդյունքում տրված են նորովի լուծումներ: Միաժամանակ, վերջնարդյունքները պարունակում են գիտական նորույթ:

Հետազոտության արդյունքները քննարկված են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում: Ատենախոսության հիմնական արդյունքներն ու բովանդակությունն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակած թվով 7 (յոթ) գիտական հոդվածներում՝ ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին համապատասխան և հրատակարման պահին ընդունելի հանդեսներում ու ժողովածուում:

Ներկայացված սեղմագիրը կազմված է ԲՈԿ-ի պահանջներին համապատասխան և հիմնականում համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և արտացոլում դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, Արտակ Արտուշի Մարտիրոսյանի «Գյուղատնտեսության ապահովագրության ներդրման արդյունավետությանզնահատման մոտեցումները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն էլ արժանի է Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝  
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ



Ա. Շարունցի ստորագրության  
իսկությունը հաստատում եմ՝  
«Արմենիա Ինչուրանս» ԱՍՊԸ  
զարգացման և գործառնական գծով տնօրեն՝

Վ. Դ. Պետրոսյան

15.10.2021թ.